«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորում է Եվրոպական միության կողմից







«ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

ԹԻՐԱԽԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՈԼՈՐՏ 1. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Խնդիրներ.

1.1. Խոցելի խմբերի համար արդարադատության հասանելիության բարելավման անհրաժեշտություն՝ ներառյալ հանրային պաշտպանի ինստիտուտի ուժեղացումը:

1.2. Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության բարելավման անհրաժեշտություն:

1.3. Դատական համակարգում էթիկայի վարքագծի բարելավման անհրաժեշտություն:

1.4. ՀՀ իրավական և դատական բարեփոխումների ծրագրի բարելավման անհրաժեշտություն, մասնագիտացված ՔՀԿ-ների մասնակցության մեխանիզմների թույլ մակարդակ ՀՀ իրավական և դատական բարեփոխումների ծրագրի մշակման, բարելավման, մշտադիտարկման և ջատագովության իրականացման գործընթացներում: ՀՀ իրավական և դատական բարեփոխումների ծրագրի մշակման և (կամ) բարելավման, մշտադիտարկման, ջատագովության գործընթացներում մասնագիտացված ՔՀԿ-ների ավելի մեծ ներգրավվածության ապահովման անհրաժեշտություն:

1.5. Պրոբացիայի ինստիտուտի բարելավման անհրաժեշտություն, մասնագիտացված ՔՀԿ-ների մասնակցության մեխանիզմների թույլ մակարդակ պրոբացիայի ինստիտուտի բարելավման, մշտադիտարկման և ջատագովության իրականացման գործընթացներում: Պրոբացիայի ինստիտուտի բարելավման, մշտադիտարկման, ջատագովության գործընթացներում մասնագիտացված ՔՀԿ-ների ավելի մեծ ներգրավվածության ապահովման անհրաժեշտություն:

ՈԼՈՐՏ 3. ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Խնդիրներ.

«Կառուցողական երկխոսության հանձնաժողով» ծրագիրը ֆինանսավորում է Եվրոպական միության կողմից

1.1. Երեխաների և գենդերային զգայուն բյուջետավորման արդյունավետ մեխանիզմների թույլ մակարդակ ազգային և տեղական մակարդակներում, ինչպես նաև ՔՀԿ-ների և ՔՀԿ-ների կոալիցիաների շրջանում: Այդ մեխանիզմների բարելավման, մշտադիտարկման, ջատագովության և դրանցում ՔՀԿ-ների ավելի մեծ ներգրավվածության ապահովման անհրաժեշտություն:

1.2. ՔՀԿ-ների մասնակցության մեխանիզմների թույլ մակարդակ դյուրացված ՀՀ պետական բյուջեի վերաբերյալ քննարկումների և հանրայնացման գործընթացներում: Այդ մեխանիզմների բարելավման, մշտադիտարկման, ջատագովության և դրանցում ՔՀԿ-ների ավելի մեծ ներգրավվածության ապահովման անհրաժեշտություն: